

Մասնագիտության նկարագիրը	
Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	0732.07.4 «Ճանապարհաշինարարական և բարեկարգման աշխատանքների տեխնիկական ապահովում» մասնագիտություն, 0732.07.04.4 «Օպերատոր՝ տրակտորի» որակավորում
I. Դերը	Իրականացնում է տրակտորային ագրեգատներով հողային, ճանապարհաշինարարական և բարեկարգման աշխատանքներ, կատարում է տրակտորների և դրանց հենքով այլ ճանապարհաշինարարական մեքենաների տեխնիկական խնամք, սպասարկում, ընթացիկ նորոգում և պահպանում:
II. Խնդիրների բնագավառները	
Խնդիրների բնագավառ 1. Ճանապարհաշինարարական և բարեկարգման աշխատանքների արտադրական գործընթացների կատարում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • ընտրել հողային, ճանապարհաշինարարական և բարեկարգման տեխնոլոգիական գործընթացները և դրանց համապատասխանող մեքենաները, օգտվել օպերացիոն տեխնոլոգիական քարտերից, • իրականացնել հողի մշակման, ճանապարհային պաստառների և ծածկույթների, ճանապարհային և կոմունիկացիոն այլ կառուցվածքների իրականացման, ճանապարհային ծածկույթների վերանորոգման, տարածքների բարեկարգման և կանաչապատման գործընթացներ:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կարգում և մեկնաբանում է օպերացիոն տեխնոլոգիական քարտերը, գծագրերը, սխեմաները, 2) ճիշտ է ընտրում տարատեսակ մասնագիտական գործընթացներին համապատասխանող ճանապարհաշինարարական մեքենաները և սարքավորումները, 3) կատարում է առաջադրանքով նախատեսված աշխատանքների ողջ ծավալը՝ վերահսկելով համապատասխան նորմատիվատեխնիկական պահանջների կատարումը, աշխատանքի անվտանգության, հրդեհային անվտանգության և բնապահպանական պահանջների բավարարումը, 4) ձևակերպում է հաշվետվություններ և հաշվառմանը վերաբերող այլ փաստաթղթեր, 5) օգտվում է տրակտորների և դրանց հենքով այլ ճանապարհաշինարարական մեքենաների շահագործմանը վերաբերող նորմատիվ փաստաթղթերից,

	<p>6) արդյունավետ է օգտագործում մեքենաների և սարքավորումների շահագործման համար անհրաժեշտ վառելիքաքսուկային նյութերը, տեխնիկական հեղուկները և այլ շահագործական նյութերը:</p>
<p>Խնդիրների բնագավառ 2. Ճանապարհաշինարարական մեքենաների անսարքությունների բացահայտում և դրանց տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքների կատարում</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ul style="list-style-type: none"> • կատարել տրակտորային ագրեգատների, համակարգերի և հանգույցների ախտորոշում՝ արտաքին նշաններով, • ընտրել տրակտորների և դրանց հենքով ճանապարհաշինարարական այլ մեքենաների տեխնիկական սպասարկումների ու ընթացիկ նորոգումների եղանակները, • կատարել տրակտորների և դրանց հենքով այլ ճանապարհաշինարարական մեքենաների տեխնիկական սպասարկման ու ընթացիկ նորոգման աշխատանքներ, • օգտվել շահագործական հրահանգներից:
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) կարող է կատարել տրակտորային ագրեգատների, հանգույցների, համակարգերի ախտորոշում՝ ըստ արտաքին նշանների, 2) իրականացնում է ոչ բարդ անսարքությունների բացահայտում և վերացում, 3) իրականացնում է տրակտորային ագրեգատների տեխնիկական վիճակի մշտադիտարկում, 4) նախապատրաստում է տրակտորային ագրեգատները շահագործման, 5) նախապատրաստում է տրակտորային ագրեգատները ընթացիկ նորոգման, 6) ընտրում և օգտագործում է տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման նյութերը, գործիքները, սարքավորումները, 7) կատարում է տեխնիկական սպասարկման աշխատանքները ողջ ծավալով և սահմանված որակով՝ ըստ համապատասխան կարգագրերի, 8) օգտվում է չափիչ գործիքներից և սարքերից, կատարում է համապատասխան չափումներ, 9) ձևակերպում է հաշվետվություններ և հաշվառման այլ

	փաստաթղթեր:
Խնդիրների բնագավառ 3. Տրակտորային ագրեգատների փորձարկման և զեւման աշխատանքների կատարում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • կատարել տրակտորային ագրեգատների, համակարգերի, հանգույցների փորձարկման աշխատանքներ, • կատարել տրակտորային ագրեգատների զեւման աշխատանքներ:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) նախապատրաստում է տրակտորային ագրեգատը փորձարկման, 2) կատարում է նորոգված ագրեգատի կամ դրա առանձին հանգույցների և համակարգերի փորձարկում՝ համաձայն համապատասխան նորմատիվաիրավական և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների, 3) նախապատրաստում է տրակտորային ագրեգատը զեւման, 4) կատարում է նորոգված ագրեգատի կամ դրա առանձին հանգույցների և համակարգերի զեւում՝ համաձայն համապատասխան նորմատիվաիրավական և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների:
Խնդիրների բնագավառ 4. Փաստաթղթային աշխատանքների կատարում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • ձևակերպել տեխնիկական շահագործման աշխատանքների հետ կապված փաստաթղթերը, • ձևակերպել տեխնիկական սպասարկման հետ կապված փաստաթղթերը, • ձևակերպել տեխնիկական զննման հետ կապված փաստաթղթերը, • ձևակերպել անսարքությունների բացահայտման և վերացման աշխատանքների հետ կապված փաստաթղթերը:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ձևակերպում տեխնիկական շահագործման աշխատանքների հետ կապված փաստաթղթերը, 2) ճիշտ է ձևակերպում տեխնիկական սպասարկման հետ կապված փաստաթղթերը, 3) ճիշտ է ձևակերպում տեխնիկական զննման հետ կապված փաստաթղթերը,

	4) ճիշտ է ձևակերպում անսարքությունների բացահայման և վերացման աշխատանքների հետ կապված փաստաթղթերը:
Խնդիրների բնագավառ 5. Ֆինանսներ, մարքեթինգ և կապ հանրության հետ:	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • կատարել պարզ ֆինանսական վերլուծություններ, • մասնակցել տեխնոլոգիական գործընթացների մեքենայական աշխատանքների ցուցադրմանը, • ներկայացնել ճանապարհաշինարարական և բարեկարգման աշխատանքների կատարման համար անհրաժեշտ տեխնալոգիաներ, • ցուցաբերել հաղորդակցման կարողություններ:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կատարում է պարզ ֆինանսական վերլուծություններ, ծախսերի և ռիսկերի գնահատում, 2) պատշաճ ձևով է ներկայացնում հողային, ճանապարհաշինարարական և բարեկարգման մեքենայացված աշխատանքների կատարման ցուցադրում՝ հասկանալիվ մասնագիտության և որակավորման էությունը և սոցիալական նշանակությունը, 3) ներկայացնում է ճանապարհաշինարարական և բարեկարգման աշխատանքների կատարման տարատեսակ տեխնոլոգիաներ, այդ թվում նորագույն, 4) վարում է բանակցություններ պատվիրատու, մատակարարող և այլ կազմակերպությունների հետ, 5) կնքում է պայմանագրեր:
III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/	Ճանապարհաշինարարական և բարեկարգման աշխատանքներում տրակտորի օպերատորը պատասխանատու է տեխնիկական պահանջներին համապատասխան հողային, ճանապարհաշինարարական և բարեկարգման աշխատանքների, ինչպես նաև տեխնիկական սպասարկումների և ընթացիկ նորոգման ժամանակին և որակով կատարելու,

	<p>նորոգված մեքենանասերի և հանգույցների հուսալիության և անվտանգության համար:</p> <p>Պատասխանատու է իր հետ աշխատող անձնակազմի անվտանգության համար:</p> <p>Գործում է ինքնուրույն կամ կազմակերպության ղեկավարի ենթակայության ներքո:</p> <p>Խնդիրների ծագման դեպքում հիմնականում ընդունում է ինքնուրույն որոշում, կամ առավել բարձր որակավորում ունեցող մասնագետի օգնությամբ:</p>
IV. Լեզուները	Հայերեն՝ գերազանց, Ռուսերեն կամ անգլերեն՝ բավարար
V. Համակարգիչը	Տեքստային և աղյուսակային խմբագրիչներ՝ բավարար, համացանց՝ բավարար
VI. Գիտելիքները	
Մասնագիտական գիտելիքներ և կարողություններ	
Գիտելիքները	<p>Տրակտորի օպերատորը պետք է իմանա.</p> <ul style="list-style-type: none"> • մասնագիտական գործնականը վերաբերող նորմատիվատեխնիկական պահանջները, • մասնագիտական ու տեղեկատվական գրականություն և աշխատանքային գործնական հետ առնչվող տերմինների իմաստը, • ճանապարհաշինարարական մեքենաների և սարքավորումների շահագործման և նորոգման տեխնոլոգիական գործընթացները, • տրակտորի և տրակտորի հենքով ճանապարհաշինարարական մեքենաների և սարքավորումների նշանակությունը, կառուցվածքային առանձնահատկությունները, աշխատանքի սկզբունքները, • տրակտորի և տրակտորի հենքով ճանապարհաշինարարական մեքենաների և սարքավորումների շահա-

	<p>գործման կանոնները,</p> <ul style="list-style-type: none">• տրակտորներում և տրակտորի հենքով ճանապարհաշինարարական մեքենաներում և սարքավորումներում կիրառվող յուղանյութերի, վառելիքների և տեխնիկական հեղուկների տեսակները, դրանց հատկությունները,• տրակտորների և տրակտորի հենքով ճանապարհաշինարարական մեքենաների և սարքավորումների տեխնիկական սպասարկման առանձնահատկությունները,• տրակտորների և տրակտորի հենքով ճանապարհաշինարարական մեքենաների և սարքավորումների խնամքի և պահպանման առանձնահատկությունները,• տրակտորների և տրակտորի հենքով ճանապարհաշինարարական մեքենաների և սարքավորումների զննման, անսարքությունների բացահայտման և դրանց վերանորոգման եղանակները,• շահագործման ժամանակ տրակտորների և տրակտորի հենքով ճանապարհաշինարարական մեքենաների և սարքավորումների աշխատանքային պարամետրերի վերահսկողության ձևերը,• մասնագիտական ոլորտում պարզ հաշվարկներ, գծագրեր ընթերցելը կամ կատարելը,• ճանապարհային երթևեկության կանոնները,• տրակտորային ագրեգատների վրա աշխատանքի անվտանգության կանոնները,• հակահրդեհային անվտանգության և բնապահպանական կանոնները,• չափիչ-ստուգիչ սարքերից և սարքավորումներից
--	---

	<p>օգտվելու կարգը,</p> <ul style="list-style-type: none"> • համակարգչային տեխնիկայից օգտվելու պարզագույն կանոնները:
<p>Կարողությունները և հմտությունները</p>	<p>Տրակտորի օպերատորը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • ինքնուրույն ընթերցել գծագրեր ու սխեմաներ, կատարել ոչ բարդ տեխնիկական հաշվարկներ բարձր որակավորում ունեցող մասնագետի օգնությամբ, • ճիշտ ընտրել հողային, ճանապարհաշինարարական և բարեկարգման մեքենայացված աշխատանքների համար համապատասխան տրակտորներ և ճանապարհաշինարարական մեքենաներ, • կազմել մեքենատրակտորային ագրեգատ (ՄՏԱ), • ընտրել ՄՏԱ-ի շարժման եղանակները և շրջադարձի ձևերը, • ընտրել տեխնոլոգիական և ագրեգատների շահագործական ցուցանիշները, • օգտվել ճանապարհաշինարարական մեքենաների ու սարքավորումների շահագործման և նորոգման հետ առնչվող գործող չափորոշիչներից, • ինքնուրույն քանդել, հավաքել, կարգավորել տրակտորի և դրանց հենքով ճանապարհաշինարարական մեքենաների հանգույցները և մեխանիզմները, • ինքնուրույն կատարել տեխնոլոգիական գործընթացներ, • կարգավորել տրակտորի հանգույցները և մեխանիզմները, • կարգավորել ճանապարհաշինարարական մեքենա-

	<p>ների և սարքավորումների բանող օրգանները,</p> <ul style="list-style-type: none"> • մասնակցել բանող օրգանների անսարքությունների բացահայտմանը, կատարել դրանց շահագործման և նորոգման աշխատանքներ, • հավաքագրել, պահպանել և փոխանցել շահագործման ժամանակ վիճակագրական տարբեր բնույթի տվյալներ, • պահպանել հակահրդեհային, անվտանգության տեխնի և բնապահպանական կանոնները, • կատարել պարզ վերլուծություններ և կազմել հաշվետվություններ:
<p>VII. Անձի որակական հատկանիշներ</p>	<p>Պարտաճանաչ, կարգապահ, հաղորդակցվող, խնայող, նորը ընկալող, աշխատանքի նկատմամբ պատասխանատրվության զգացում ունեցող, ուսուցանելու կարողություններ ցուցաբերող:</p>
<p>Որակավորման մակարդակը</p>	<p>ՈՄ – 4</p>